**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**
**ԿԴՄՀՀ-ԲՄԾՁԲ-23/14 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

ք. Երևան «29» մայիսի 2023թ.

2023թ-ի մայիսի 29-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 հասցեում գտնվող «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ **ԿԴՄՀՀ-ԲՄԾՁԲ-23/14** ծածկագրով **նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայությունների** գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Ա. Գրիգորյան | Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի հրշեջ ծառայության պետ՝ նախագահ, |
| Մ. Սարգսյան | «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի հրշեջ մասնագետ՝ անդամ, |
| Ա. Նալբանդյան | «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-գլխավոր ճարտարագետ՝ անդամ, |
| Է. Ղուկասյան | «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի անվտանգության և ՏՏ ծառայության պետ՝ անդամ, |
| Լ. Տանդիլյան | «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահի տեղակալ՝ անդամ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Գրիգորյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ն. Բոյաջյանը՝ «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի գնումների համակարգող՝ քարտուղարը:

**1. ԿԴՄՀՀ-ԲՄԾՁԲ-23/14 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 26.05.2023 թվականին ներկայացված հարցմանը պարզաբանում տրամադրելու վերաբերյալ**

**Պարզաբանման պահանջի տեքստ**

**Հարցադրում N 1**

Նախագծման փուլում շենքի հատակագիծը կարո՞ղ եք տրամադրել նախագծող կազմակերպությանը :

**Հարցադրում N 2**

Պահանջվում է նախատեսել փոշեհատիկային հրդեհաշիջման համակարգ:

**Հարցադրում N 3**

Պահանջվում է նախատեսել սպրինկլերային հրդեհաշիջման համակարգ:

**Հարցադրում N 4**

Խնդրում եմ հստակեցնել, թե որ շենքերի ու գոտիների համար է այն ենթադրվում (տեխնիկական շենքեր, ավտոկայանատեղի և այլն):

**Հարցադրում N 5**

Ազդարարման և տարհանման կառավարման համակարգի ծավալներում ենթադրվու՞մ է արդյոք խոսքային ազդարարման համակարգի (система речевого оповещения) կիրառում: Եթե այո, ապա ինչպիսի՞ տեխնիկական պահանջներ ունեք վերջինիս մասով:

***Հարցադրում N 6***

Տեխնիկական նկարագրում ոչինչ չէր նշված օդի դիմհար և ծխահեռացման համակարգերի վերաբերյալ: Ենթադրվու՞մ է արդյոք, որ դրանք նույնպես անհրաժեշտ է նախատեսել համապատասխան ավտոմատացմամբ, ինչպես նաև անհրաժեշտ կլինի նախատեսել օդափոխության օդի լավորակման համակարգերի անջատման ավտոմատացում հրդեհի դեպքում:

***Պարզաբանում տրամադրելու տեքստ***

***Պարզաբանում N 1***

Այո՛, տրամադրելու ենք:

***Պարզաբանում N 2***

Ո՛չ, չի պահանջվում:

***Պարզաբանում N 3***

Պահանջվում է նախատեսել սպրինկլերային հրդեհաշիջման և դրինչեռային համակարգեր:

***Պարզաբանում N 4***

«Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» կառույցը՝ ամբողջովին (սպորտային և համերգային դահլիճներ, կոնֆերանսի և սեմինարների սրահներ, ճեմասրահներ և այլն, ավտոկայանատեղի չի ներառում):

***Պարզաբանում N 5***

Այո՛, ենթադրվում է. որոշ հատվածներում՝ ըստ սահմանված նորմերի:

***Պարզաբանում N 6***

Այո՛, ենթադրվում է:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Գրիգորյան ______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Մ. Սարգսյան ______________

Ա. Նալբանդյան ______________

Է. Ղուկասյան ______________

Լ. Տանդիլյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ն. Բոյաջյան ______________